

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի մարտի 20-ին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈՂ-ՎԱԾ 1. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների 1994-1999 թվականների հողի հարկի վճարման ժամկետը համայնքի ավագանու որոշմամբ կարող է հետաձգվել մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը՝ համայնքի ավագանու սահմանած ժամանակացույցի (այսուհետ՝ ժամանակացույց) համաձայն:

2. Մինչև որոշումն ընդունելը վճարումներ կազմակերպողը՝ համայնքի ղեկավարը, հողի հարկ վճարողների՝ 1994-1999 թվականների հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններն ստանալու նպատակով գրավոր դիմում է տարածքային հարկային մարմին: Վերջինս դիմումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, վճարումներ կազմակերպողին տրամադրում է պահանջվող տեղեկությունները:

3. Այդ տեղեկությունների հիման վրա համայնքի ավագանին ընդունում է որոշում՝ 2001-2005 թվականների բյուջետային տարիներն ընդգրկող ժամանակացույցը սահմանելու մասին: Ընդ որում, յուրաքանչյուր տարվա ընթացքում վճարվելիք գումարը կարող է սահմանվել 1994-1999 թվականների համար հաշվարկված և չվճարված հողի հարկի հետևյալ չափերով.

- ա) մինչև 2001 թվականի վերջը՝ 10 տոկոսը.
- բ) մինչև 2002 թվականի վերջը՝ 30 տոկոսը.
- գ) մինչև 2003 թվականի վերջը՝ 50 տոկոսը.
- դ) մինչև 2004 թվականի վերջը՝ 75 տոկոսը.
- ե) մինչև 2005 թվականի վերջը՝ 100 տոկոսը:

4. Համայնքի ավագանին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, հաստատում է, ինչպես նաև մարզպետին ու տարածքային հարկային մարմին է ներկայացնում ժամանակացույցը:

5. Այդ ժամանակացույցի համաձայն՝ հարկատուները, վճարած հարկի գումարներին համամասնորեն, ազատվում են դրանք՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված տույժերից:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը 1994-1999 թվականներին չվճարված հողի հարկի դիմաց օրենսդրությամբ հաշվարկված և վճարված տույժերի գումարը հաշվանցվում է հարկատուների՝ նույն համայնքի տարածքում գտնվող օբյեկտների հողի հարկի և գույքահարկի ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին:

ՀՈՂ-ՎԱԾ 2. ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքները 1994 թվականից ազատվում են հողի հարկից:

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար հողի հարկ վճարողներն ազատվում են 1994 թվականի և հետագա տարիների համար հաշվարկված հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված տույժերից:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն արտոնություն ստացող բնակավայրերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ չօգտագործվող հողատարածքներինը՝ մարզպետը:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սույն հոդվածով սահմանված հարկ վճարողների կողմից 1994 թվականի և հետագա տարիների համար վճարված հողի հարկի, ինչպես նաև այն սահմանված ժամկետից ուշ վճարելու համար տույժերի գումարները հաշվանցվում են հարկատուների՝ նույն համայնքի տարածքում գտնվող հարկվող օբյեկտների հողի հարկի և գույքահարկի ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին:

(2-րդ հոդվածը խմբ., փոփ. 28.06.02 ՀՕ-400-Ն)

ՀՈՂՎԱԾ 3. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հողի հարկի ժամկետանց հարկային պարտավորությունների վճարման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը:

ՀՈՂՎԱԾ 4. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

Երևան
21 ապրիլի 2001 թ.
ՀՕ-162